Ցանում են նոյն հացաբոյսերը (նաև զառագուռայ), ինչ որ Նամակերտում։

Այստեղի կրթական գործը չափազանց տխուր և անմշխիթար վիճակի մէջ է գտնուում. Ս. Նշան եկեղեցու բակում է գտնուում գիւղի խալիֆայական փոքրիկ դպրոցը, ուր իբր թէ սովորում են մօտ 30 աշակերտ-աշակերտուհիներ։ Եկեղեցին ունի «Անանիա» անունով ձեռագիր մի աւետարան։ Բնակիչների կէսից աւելին անգրագէտ է։

Այս գիւղից քառորդ ժամ հեռու, գէպի արևելք— հիւսիս ուղղութեամբ, գտնուում է մի ուխտատեղի «Ղազանաս» անունով. դա գմբէթաձև քարէ մի փոքրիկ սենեակ է, ուր կան մի քանի խաչեր և մի արձանագրութիւն, որի տառերը մաշուած լինելով՝ չկարողացայ կարդալ։ Ղառղունի և մօտակայ գիւղերից կանայք Համբարձման և Ղատկին երբեմն ուխտի են գալիս։

Ղառղունի այգիները փռուած են գիւղից կէս ժամ հեռու, մի բլրի կրծքին։ Գերեզմանատունը գտնուում է գիւղին կից։

| № | ԿԱՐԳԵՐ | Շունչ |
|---|---|---|
| 1 | Աղքատ . . . . . | 100 |
| 2 | Զունևոր . . . . . | 100 |
| 3 | Միջակ . . . . . | 365 |
| 4 | Ունևոր . . . . . | 200 |
| 5 | Հարուստ . . . . . | 100 |
| | Ընդամենը | 865 |

## ՍՎԱՐԱՆ

Ղառղունից մօտաւորապէս կէս ֆարսախ (2 վերստ) գէպի հարաւ, մի բարձր, տափարակ բլրի վրայ փռուած է Սվարանը. դա զուտ հայաբնակ մի գեղեցիկ գիւղ է, օդով ու ջրով սքանչելի և դիրքով բանաստեղծական։ Բայց աւելի բանաստեղծական է գիւղի արևելեան մասը. նա ունի հարուստ բուսականութիւն, ծովանման արտեր, որոնք զար-